ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ -223-2023

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «26» «04» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրեն Ս. Խոջամիրյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1124. Գրահրատարակչության և գրադարանների ծրագրի» «11005. Աջակցություն գրականության հանրահռչակմանը, գրական ծրագրերին և գրքերի միջազգային ցուցահանդեսներին մասնակցությանը» միջոցառման «Գրքի երևանյան փառատոն» տողով (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել Գրքի երևանյան վեցերորդ փառատոնի ծրագիրը (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված

ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների

շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են կազմակերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական

հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. հրապարակել պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.13. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան սույն պայմանագրի 4.1-ին կետով հաշվետվությունների համար սահմանված ժամկետից հետո 20 օրվա ընթացքում:

2.4.15. Տպագրական նյութերում, գովազդային պաստառներում, համացանցում և լրատվամիջոցներով ելույթներ ունենալիս նշել, որ «Գրքի երևանյան փառատոնն իրականացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության դրամաշնորհով»:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանն է հատկացնում է 9801.4 հազար (ինը միլիոն ութ հարյուր մեկ հազար չորս հարյուր) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը Կատարողին հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20%-ը սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ

նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023 թ. մայիսի 28-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2023 թվականի ապրիլի 3-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 4):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար՝ սույն պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք	ք. Երևան, Քանաքեռ, 2-րդ փողոց, 4 տուն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032811	Հ/Հ 900018001884
ՀՎՀՀ՝ 02698732	ՀՎՀՀ 00805568
	Հեռ.՝ 010 284686
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Հ. Հակոբյան	_____ Ս. Խոջամիրյան
Կ.Տ.	Կ. Տ.

Հավելված N 1
« 26 » « 04 » 2023 թ.
N ՄՇԴ - 223 -2023 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ
Գրքի երևանյան վեցերորդ փառատոնի

1	Կազմակերպության անվանում	«Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Ք. Երևան, Քանաքեռ, 2-րդ փողոց, 4 տուն
3	Ծրագրի անվանում	Գրքի երևանյան վեցերորդ փառատոն
3.1	Բովանդակություն	Գրքի երևանյան փառատոնը Հայաստանում գրականության և գրահրատարակչության ոլորտի ամենամեծ ծրագիրն է: Այն իրականացվում է 2017 թվականից: Փառատոնը տևում է երեք օր, բաղադրիչներն են՝ պարտադիր զեղչով գրքերի ցուցահանդես-տոնավաճառը, չորս անվանակարգում գրական մրցույթը, շնորհանդեսները, պանելային զրույցները, վարպետության դասերը, հայ և արտասահմանյան գրողների հետ բացառիկ հանդիպումները, համերգները և այլն: Եթե ներկայացնենք փառատոնի նախորդ տարվա՝ 2022 թվականի արդյունքները, ապա ունեցել ենք 100-ից ավելի մասնակից գրողներ 7 երկրից, 60-ից ավելի միջոցառումներ 10-ից ավելի հասցեներում, 15000 այցելու, 35-ից ավելի մասնակից հրատարակչություններ, շուրջ 10 հազար վաճառված գիրք: Գրքի երևանյան փառատոնը ամենամյա մշակութային միջոցառում է, որը տոնում է սերն առ գրականություն՝ միավորելով գրողներին, գրասերներին և հրատարակչատներին: Եռօրյա փառատոնը անցկացվում է Երևանում, և պարտադիր այցելության իրադարձություն է բոլոր նրանց համար, ովքեր գնահատում են պատմասացության արվեստը: Փառատոնը ներառում է մեծ թվով մշակութային միջոցառումներ, մրցույթներ և ընթերցումներ, որոնք բացահայտում են գրականության աշխարհը: Այցելուները կարող են մասնակցել տարբեր թեմաներով ծավալվող քննարկումների, օրինակ՝ գեղարվեստական և ոչ գեղարվեստական գրականության, պոեզիայի ոլորտներում և այլուր, գրքերի մակագրության միջոցառումների, հանդիպել սիրված գրողների ու հրատարակիչների:

		Գրքի երևանյան փառատոնը հնարավորություն է տալիս թե՛ փորձառու, թե՛ սկսնակ գրողներին ներկայացնելու իրենց ստեղծագործությունները և մասնակցելու գրականության վերաբերյալ զրույցներին: Փառատոնը նաև ճանաչում ձեռք բերելու հարթակ է նրանց համար: Ի թիվս գրական միջոցառումների՝ փառատոնը նաև հայտնի է կենդանի երաժշտությամբ, պարային ներկայացումներով և մշակութային այլ ներառումներով: Այցելուները կարող են համտեսել տեղական խոհանոցն ու վայելել այս յուրահատուկ իրադարձության պայծառ մթնոլորտը: Գրքի երևանյան փառատոնն ավելին է, քան պարզապես գրական միջոցառումը. այն մարդկային փորձառության և պատմասացության ուժի տոն է, հարթակ է միմյանց ճանաչելու և գրականության անսահման էջերը բացահայտելու համար:
3.2	Նպատակ	Գրքի երևանյան փառատոնն ունի մի շարք նպատակներ. - Ընթերցանության խթանում - Հայ դասական և ժամանակակից գրականության հանրահռչակում - Գրող – քննադատ - գրական մամուլ - գրական գործակալ – հրատարակիչ - գրավաճառ շղթայի ամրացում - Քննադատական մտքի զարգացում - Գրողների ստեղծագործական կարողությունների դրսևորման համար նպաստավոր պայմանների ստեղծում - Նոր անունների հայտնաբերում, առաջխաղացում - Նոր հրատարակությունների, գրական կյանքի նորությունների հասանելիություն - Գրականության և մյուս արվեստների երխոսության հարթակի ստեղծում
3.3	Անցկացման ժամկետ	2023 թ. մայիսի 25, 26, 27
3.4	Անցկացման վայր	Ք. Երևան, Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն
3.5	Ակնկալվող արդյունքներ	Գրքի երևանյան փառատոնի գրանցած արդյունքները փաստում են ընթերցողական հետաքրքրությունը, ոլորտի մասնագետների և կառույցների գնահատականները, փառատոնի հարյուրավոր լուսաբանումները հայաստանյան և արտերկրի լրատվամիջոցներով, միջազգային տասնյակ հյուրերի այցելությունները մեր երկիր:

		Գրքի երևանյան փառատոնի իրականացման արդյունքում մեկ հարթակում են միավորվում բոլոր գրողները, գրաքննադատները, գրական գործակալները, գրական և մշակութային մամուլի ներկայացուցիչները, հրատարակիչները, գրախանութները, այլ կառույցներ. և մասնագետներ: Այս փառատոնը գրահրատարակչության ոլորտի ամենամեծ ծրագիրն է Հայաստանում: Խթանվելու է ընթերցանությունը, հանրահռչակվելու է հայ դասական և ժամանակակից գրականությունը, համագործակցության հնարավորություններ կլինեն գրողների և այլ ոլորտների ներկայացուցիչների միջև: Հայ ընթերցողները արտասահմանյան գրողների հետ շփվելու հնարավորություն կունենան: Իսկ ասվածը թվերով կարելի է տեսնել ստորև՝ ոչ ֆինանսական ցուցանիշների տողում:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	40 կազմակերպություններ (հրատարակչություններ, գրավաճառ և այլ), որոնք կմասնակցեն գրքի ցուցահանդես-տոնավաճառին 50 գրողներ, թարգմանիչներ, քննադատներ, այլ մասնագետներ Հայաստանից և արտերկրից, որոնք կմասնակցեն տարբեր միջոցառումների 15 միջոցառումներ 15 000 այցելու

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032811
ՀՎՀՀ՝ 02698732

Գլխավոր քարտուղար՝

---------- Հ. Հակոբյան

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Քանաքեռ, 2-րդ փողոց, 4 տուն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001884
ՀՎՀՀ 00805568
Հեռ.՝ 010 284686

Տնօրեն՝

---------- Ս. Խոջամիրյան

Կ. Տ.

Հավելված Ի
« 26 » « 04 » 2023
N ՄՇԴ-223 -2023 պայմանա

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Գրքի երևանյան վեցերորդ փառատոնի իրականացման հետ կապված ծախսերի

Հ/Հ	Ծախսատեսակի անվանումը	Չ/Մ	Քանակ	Մեկ միավորի արժեքը (հազ. դրամ)	Գումարը (հազ. դրա
1	**Աշխատանքային խմբի վարձատրություն** (ներառյալ հարկերը)*				**3662.8**
	Ծրագրի հեղինակ (1 ամիս, 18 օր)	մարդ	1	600.0	600.0
	Ծրագրի ղեկավար (1 ամիս, 18 օր)	մարդ	1	371.4	371.4
	Համակարգող (1 ամիս, 18 օր՝ գրքերի ցուցահանդես-տոնավաճառի կազմակերպման)՝	մարդ	1	300.0	300.0
	Համակարգող (1 ամիս, 18 օր՝ գովազդային արշավի և միջոցառումների կազմակերպման պատասխանատու)՝	մարդ	1	300.0	300.0
	Համակարգող (1 ամիս, 18 օր՝ միջազգային հյուրերի կոորդինատոր պատասխանատու)՝	մարդ	1	360.0	360.0
	Համակարգող (1 ամիս, 18 օր՝ հասարակայնության հետ կապերի պատասխանատու, սոցմեդիայի մասնագետ)	մարդ	1	371.4	371.4
	Համակարգող (1 ամիս, 18 օր՝ հաշվապահական հարցերով)	մարդ	1	240.0	240.0
	Համակարգող (1 ամիս, գնումների հարցերով)	մարդ	1	200.0	200.0
	Կայքի դիզայներ (1 ամիս)	մարդ	1	200.0	200.0
	Փառատոնի կայքի սպասարկող, բովանդակության պատասխանատու (1 ամիս, 18 օր)	մարդ	1	200.0	200.0
	Գրական մրցույթի փորձագետ-ժյուրի (1 ամիս)	մարդ	4	100.0	400.0
	Լուսանկարիչ (3 օր)	մարդ	1	120.0	120.0
2	**Տպագրական ծախսեր**				**1147.0**
	Մրցանակային վաուչեր	հատ	5	4.0	20.0
	Էջանիշ-թռուցիկ	հատ	1000	0.08	80.0
	Պայուսակ կտորե (գունավոր, թվային տպագրություն)	հատ	100	3.4	340.0
	Շապիկի տպագրություն (գունավոր տպագրություն կամ ասեղնագործություն)	հատ	100	4.2	420.0
	Բեյջ	հատ	200	0.24	48.0
	Փին	հատ	200	0.22	44.0
	Բուկլետ (A4 գունավոր)	հատ	1000	0.05	50.0
	Բաժակի տակդիր (գունավոր տպագրություն)	հատ	100	0.25	25.0
	Պոլիէթիլենային տոպրակ (գունավոր տպագրություն)	հատ	1000	0.12	120.0
3	**Հանրահռչակմանն ուղղված ծախսեր**				**2158.0**

	Սոցիալական ցանցերում գովազդ	ամիս	2	226.5	453.0
	Տեսանկարահանում, հոլովակների պատրաստում (յուր.՝ մոտ 5 րոպե տևողությամբ)	հատ	3	300.0	900.0
	Կրծքանշանի պատրաստում (արծաթ)	հատ	230	3.5	805.0
4	**Դրամական պարգև՝ գրական մրցույթի անվանակարգերում հաղթողներին** (ներառյալ հարկերը)				**1200.0**
	«Մանկապատանեկան գրականություն» անվանակարգում հաղթող ճանաչված ստեղծագործության համար	մարդ	1	300.0	300.0
	«Դրամատուրգիա» անվանակարգում հաղթող ճանաչված ստեղծագործության համար	մարդ	1	300.0	300.0
	«Արձակ» անվանակարգում հաղթող ճանաչված ստեղծագործության համար	մարդ	1	300.0	300.0
	«Պոեզիա» անվանակարգում հաղթող ճանաչված ստեղծագործության համար	մարդ	1	300.0	300.0
	ԸՆԴԱՄԵՆԸ				**8,167.8**
	ԱԱՀ**				**1,633.6**
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ				**9,801.4**
	* Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով				
	** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:				

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032811
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Հ. Հակոբյան
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան» ՊՈԱ
ք. Երևան, Քանաքեռ, 2-րդ փողոց, 4 տուն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001884
ՀՎՀՀ 00805568
Հեռ.՝ 010 284686
Տնօրեն՝

Ս. Խոջամիրյան
Կ. Տ.

Հավելված N 3
«26» «04» 2023 թ.
N ՄՇԴ-223/2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____
Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավարը՝

---------- *(անուն, ազգանուն)*
Կ.Տ.

Կատարող կազմակերպության գլխավոր հաշվապահը՝

---------- *(անուն, ազգանուն)*

ՀՀ ԿԳՄՍ նախարարության՝ փաստաթղթերն ընդունող պատասխանատու՝

---------- *(անուն, ազգանուն)*
Կ.Տ.

Հավելված N 4
«26» «04» 2023 թ.
N ՄՇԴ -223- 2023 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3,
Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան « » « » 2023

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը՝ N ՄՇԴ « » « » 2023 թ.

Պետական մարմինը՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____-ի *(անուն, ազգանուն)* և կազմակերպությունը, ի դեմս « նախագահ _____-ի *(անուն, ազգանուն)*, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ բովանդակային վարչության « » « » 2023 թ. եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2023 թ. N « » եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Կազմակերպությունը պայմանագրի շրջանակում իրականացրել է միջոցառումը, իսկ պետական մարմինը վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Գլխավոր քարտուղար՝

Կ.Տ.

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Տնօրեն՝

Կ. Տ.